

ՕՏԱՐ ԵՐԿՐՈՒՄ

ԱՆՏՏՕՆ ՉԵԽՈՎ-ից՝ Թարգ. Մ. Նալասարդեանի

Կիրակի կէս օրին էր։ Կալածաւորէր Կամըշը իր տանը՝ ճոխ պարբաստած սեղանի մօտ նստած նախաճաշում է։ Ճաշակ-ցում էր նրան մի մաքուր հագնւած ու լաւ սափրւած ծերունկ՝ Ֆրանսիացի պարոն Շամպունչը։ Շամպունչը երբեմն Կամըշի մօտ շատրխարակ էր, նրա երեխաներին սովորեցնում էր պարզաճ ձևեր, լաւ արտասանութիւն և պարել, իսկ չեւոյ, երբ Կամըշի զաւակ-ները մեծացան և սպաներ եղան, Շամպունչը մնաց արական սեռի մի տեսակ աղախին։ Բարդ չեն նախկին շատրխարակի պարտաւորու-թիւնները։ Նա պարտաւոր է ճաշակով հագնելի, բոյրերի հօտ փչի վրայից, Կամըշի ցնդախօսութիւնները լսի, ուտի, խմի, քնի—ու աւելի ոչինչ, կարծում եմ։ Այս բոլորի փոխարէն նա ստա-նում է սնունդ, սենեակ և անորոշ ռոճիկ։

Կամըշը ուզում է և, ըստ սովորականին, ցնդաբանում։

—Սարսափելի է, ասում է նա, արտասունքները սրբելով, որ ցայտել էին նրա աչքերից խոզապուխտի կորորին խիստ թանձր քսած մանանեխից։ Ո՛ւ՛՛՛՛ զլխիս տւեց ու ամբողջ մարմնովս ան-ցաւ։ Բայց տեսէք, ձեր Ֆրանսիական մանանեխին այդպէս չի անի, թէկուզ ամբողջ սրւակը դադարկես։

—Մարդ կայ, որ Ֆրանսիականն է սիրում, մարդ կայ ռուսականը...—Յայտնում է համեստաբար Շամպունչը։

—Ֆրանսիականն ոչ ոք չի սիրում բացի միայն Ֆրանսիացի-ներից։ Ինչ կուզես որուր Ֆրանսիացուն—ամենը կուտէ. և գորտ, և մուկը, և բոլորներ... Ենթադրե՛ք։ Օրինակի համար ձեզ չի դուր

գալիս այս խոզապուխտը, որովհետև ուսական է, բայց թող ձեզ մատուցանեն տապակած ապակի և ասեն թէ Ֆրանսիական է, շուք կուտէք լեզուն չըփփացընելով... ձեր կարծիքով ուսական ամեն բանը զազրելի է...

— Ես այդ չեմ ասում:

— Ռուսական ամէն բանն էլ գարշելի է, իսկ Ֆրանսիականը — ո՛հ, սէ տրէ ժողի: Ձեր խօսքին նայելով՝ Ֆրանսիացից առաւել լաւ երկիր չը կայ, իսկ իմ կարծիքով... Դէ՛ն, ի՛նչ բան է Ֆրանսիան, բարեխեղճաբար ասած: Հողի մի կտորիկ: Եթէ մեր Դափաւորներից մէկին այնտեղ ճամփենք, նա մի ամսից յետոյ իսկոյն վերադարձի մասին խնդրամատոյց կը լինի. շրջելու տեղ չկայ: Ձեր ամբօջջ Ֆրանսիան մի օրում կարելի է շրջագացել, իսկ այստեղ շէմքից շուրս ուրք կոխեցիր՝ էլ վերջ ու սահման չկայ: Գնում ես, գնում ես...

— Այո, monsieur, Ռուսաստանը լայնատարած աշխարհ է:

— Իհարկէ, հէնց այդպէս է: Ձեր կարծիքով Ֆրանսիացիները ամենից լաւ մարդիկն են: Ուսում առած ու խելքով ժողովուրդ: Քաղաքակրթւած: Համաձայն եմ, Ֆրանսիացիները բոլորը ուսումով մարդիկ են, նուրբ ձեւեր ունին... այդ ճշմարիտ է... Ֆրանսիացին իրեն երբէք չի թոյլ տայ գոհնիլու թիւն. պէտք եղած միջոցին տիկիներին աթոռ կառաջարկէ, պատառաքալով կարօ իթ (ракъ) չի ուտի, չի թքի յատակի վրայ, սակայն... ոգի չկայ: Այն ոգին չկայ նրանում: Միայն թէ անկարող եմ ձեզ բացատրել, ինչպէս արգայացտել այդ, Ֆրանսիացու մէջ ինչ որ մի այնպիսի բան չկայ... (խօսողը մտքները շարժում է) ինչ որ մի բան... իրաւաբանական: Յիշում եմ, կարդացել եմ մի տեղ, որ ձեզանում, բոլորի խելքը ձեռք բերովի է, գրքերիցն է, բայց մեր խելքը բնածին է... Թող սովորեցնեն ուսին գիտութիւններ ինչպէս հարկն է, այն ժամանակ ձեր պրոֆէսորն էլ չի կարող համեմատել:

— Կարելի է... — կարծես ակամայից ասում է Շամպունյը:

— Զէ, ոչ թէ կարելի է, այդպէս է: Նեղանալու հարկ չկայ, ուղիղն եմ ասում: Ռուս խելքը — հնարագեղ խելք է: Միայն ի հարկէ, չեն թոյլ տալիս նրան: Պարծենալ չգիտէ... կը հնարի որ և բան և կը կոտրի, կամ թէ երեսաներին կը տայ իբր խաղալիք,

իսկ Ֆրանսիացիին թող հնարի մի չնշին իբր, իսկոյն ամբողջ աշխարհում աշմուկ կը հանէ: Անցեալներում կառապան Եոնան փայտից մի մարդուկ էր շինել. հէնց թելը ձգելիւ լի է չէ, իսկոյն այդ մարդուկը անպարզածութիւն կը գործէր... բայց և այնպէս Եոնան չի պարծենում: Ընդհանրապէս... չեմ ախորժում Ֆրանսիացիներից: Սաածս ձեզ չի վերաբերում, այլ առ հասարակ... բարոյազուրկ մարդիկ են: Արտաքինով կարծես թէ մարդու են նմանում, բայց շների պէս են ապրում: Վերցնենք օրինակի համար հէնց ամուսնութիւնը: Մեղանում պատկեցիր՝ Դէհ, մեխուր կնկանդ վրայ ու էլ մի խօսի, իսկ ձեզանում սաորանն գիտէ թէ լինչ է: Երիկն ամբողջ օրը սրճարանն է նստած, իսկ կնիկը ողջ տունը Ֆրանսիացիներով կը լցնի ու, հայդէ, նրանց հետ վարլի է տալիս:

—Այդ ճշմարիտ չէ, ժայթքում է Շամպունյը չհամբերելով այլ ևս:— Ընտանեկան սկզբունքը խիստ բնորոշ է Ֆրանսիայում:

—Գիտենք մենք այդ սկզբունքը: Իսկ ձեզ ամօթ է պաշտպանել այդպէս... անկողնակալ պէտք է լինել. խողեր են, իսկ և իսկ խողեր... Շնորհակալութիւն գերմանացիներին, որ նրանց ծեծեցին... Ատուած է վկայ, շնորհակալութիւն... թող Ատուած նրանց կեանք տայ...

—Այս Դէպքում, monsieur, ես չեմ հասկանում, ասում է Ֆրանսիացիին տեղից վեր թռչելով ու աչքերը կաթաւորելով,—եթէ Ֆրանսիացիներին ատում էք, էլ լինչի էք ինձ պահում:

—Ի՞նչ անեմ, ռար լրկեմ ձեզ:

—Արձակեցէք—ու ես Ֆրանսիա կը վերադառնամ:

—Ինչպէ՞հէս: Բայց միթէ ձեզ կը թողնեն Ֆրանսիա մընել: Ձէ որ ձեր հայրենիքին Դուք Դաւաճանեցիք: Ձեզանում մէկ կը լսես Նապոլէոնն է մեծ մարդ, մէկ էլ կիմանաս Գամբուան է... ինքը սաորանէն չի հասկանալ:

—Monsieur, ասում է Ֆրանսիէն Շամպունյը պորթկալով ու անձեռնոցը փոփոխելով,—առաւել խիստ վիրաւորանք, որը Դուք այս վայրկեանին հասցրիք իմ զգացմունքներին, անկարող էր երևակայել թշնամիս անդամ: Էլ մեր մէջ ամէն ինչ վերջացած է: Ու ձեռքը եղերակոյն ձեռով շարժելով Ֆրանսիացիին շնորհալիութեամբ նետեց անձեռնոցը սեղանի վրայ և Դուքս գնաց պարուաւոր կերպով:

Մտաւորապէս երեք ժամից յետոյ սեղանի սպասները փոփոխուեալ են և ծառան ծաշ է մատուցանում և ամբշէլը ծաշի է նըստում մենակ: Մի բաժակ օղի ընդունելուց վերջը նա ցնդաբանելու ծարաւ է զգում: Ուզում է լեզւագարել իսկ ունկնդրող չկայ...

— Ի՞նչ է անում Ալֆոնս Լիւդովիկովիչը, հարցնում է նա սպասաւորին:

— Պաշուսակն է կապում...

— Այ՛ յիմարանաս, մեղայ քեզ Եսուած ..

Շամպունյը նստած յատակի վրայ սենեակի մէջ տեղում դարստորում է, դողդոջ ձեռքերով, պաշտակով ձերմակելէնը, բոյրերը, աղօթագրքեր, վարտիքակիրներ, փողպատներ... Նրա ամբողջ պատշաճաւոր էութիւնը, պաշուսակը, մահճակալն ու սեղանը տոգորած են ամբողջապէս կոկիկութեամբ և կանացիութեամբ: Նրա մեծ մեծ, կապուտ աչքերից հոտող արտաւուքի խոշոր հարկիկները կաթում են պաշուսակի մէջ:

— Դէպի ո՞ւր, հարցնում է ամբշէլը փոքր ինչ կանգնելուց վերջը:

Լուռ է Ֆրանսիացին:

— Ճամփայ էք գնում, շարունակում ամբշէլը: — Ի՞նչ կայ որ, ինչպէս կամենաք... սակայն իմացէք առանց անցագրի: Զարմանում եմ: Զգիւի՞ք միթէ, ձեր անցագիրը կորցրել եմ հօ: Թղթերիս մէջ դրի սև կորել է... իսկ մեզանում անցագրի մասին խիստ են: Հաղիւ հինգ վերստ կը կտրենաք անցնել ու ձեզ կը ձերբակալեն:

Շամպունյը գլուխը բարձրացնում ու առանց հաւաք ընծայելու նստում է ամբշէլին:

— Այո... Այ, կը տեսնէք: Փողոցում կը նկատեն, որ անցագիր չունէք և խփոյն— ո՞վ ես: Ալֆոնս Շամպունյ. ճանաչում ենք այդ Ալֆոնս Շամպունյներին: Զէք բարեհաճի արդեօք ոչ այնքան էլ հեռաւոր կողմեր:

— Դուք հանաք էք անում:

— Հանաք որն է: անում: Շնորհակաւորս է: Միայն լսեցէք պաշմանը, յետոյ չսկսէք ողբալով նամակներ գրելու: Մտքը մատիս չեմ խփի, երբ ձեզ բխոված ոտերով մօտովս անցկայնեն:

Շամպունյը վեր է ցափկում տեղից գունապուած, աչքերը լայն շրտած ու քայլում է սենեակում:

— Ի՞նչ էք անում շուք ինձ, ասում է նա յուսահատութիւնից գլուխը բռնելով. — Ի՞նչը Աստուծո՛ւ Օսո՛, անիծւի այն բոպէն, երբ մոքիս մեջ ծագեց այդ շարաքաշ դաշափարը, թողնել հայրենիքս:

— Լա՛ւ է, լաւ... ես կատակ արիւ— Այս տուփուցը հանաք չի հասկանում: Խօսք ասել չի կարելի:

— Իմ անգլին, հեծկլտում է Շամպունյը կամըշէի տոնից անշորրաւած:— Երդւում եմ, որ արդէն կապուած եմ Ռուսաստանին, ձեզ և ձեր երեխաներին... Ձեզանից անջարւել մեռնելու չափ ծանր է ինձ համար, սակայն ձեր ամեն մի խօսքը սիրտ է կտրատում:

— Էէ, տուփուց: Ես որ Ֆրանսիացիներին յիշոցեմ, շուք ի՞նչ ունէք վիրաւորւելու. զումը չենք յիշոցում, ուրիմն ամենքն էլ պիտի նեղանան: Իսկ շուք թքեցէք... Այ, օրինակի համար վերցրէք ապալառու Լազար Իսակիւին... Ես նրան ըսենց ընենց, ջհուդ, քկոտոր շուն եմ ասում, փեշիս ծալով խողի ականջ եմ ցոյց տալիս կալիքներինցն եմ քաշում, բայց նա չի նեղանում:

— Բայց նա սորուկ է. կոպէկի համար պատրաստ է իր երեսին թքել տալու:

— Դէհ, լաւ է, լաւ, բաւական է: Գնանք ճաշելու: Հաշտութիւն...

Շամպունյը ճերմակում է արտասուլից դէմքը ու կասըշէի հետ գնում է դէպի սեղանատուն: Առաջի կերակուրը ուտում են լուռ ու մունջ, երկրորդից յետոյ սկսում է նորէն նոյն պատմութիւնը, և այսպէս Շամպունյը-ի տանջանքներին վերջ չկայ: